

ԿԱՐԾԻՔ

Նունե Գազիկի Մովսիսյանի «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» ատենախոսական աշխատանքի մասին

Ատենախոսական այս աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, այդ գլուխներից յուրաքանչյուրը եզրափակող և ընդհանուր եզրակացություններից և գրականության ցանկից:

Առաջին երկու գլուխներում ատենախոսը անդրադառնում է իր հետազոտության համար հիմնային նշանակություն ունեցող հարցերի լուսաբանմանը: Նախ առաջին՝ «Սովորողների ստեղծագործական մտածողության հիմնահարցերը մեթոդական և մանկավարժահոգեբանական գրականության մեջ» գլխում անդրադառնում է ստեղծագործական մտածողության հիմնահարցին նվիրված հետազոտություններին: Ընդ որում հիմնահարցը դիտարկում է մասնավոր, զուտ ֆիզիկայի մեթոդիկայի տեսանկյունից, ապա՝ ընդհանուր հոգեբանամանկավարժական դրվածքով: Ատենախոսը բերում է ստեղծագործական մտածողության՝ իր հետազոտության համար ընդունելի սահմանումը, առանձնացնում է ստեղծագործական մտածողության բաղադրամասերը և դիտարկում նրա վրա ազդող գործոնները: Մեթոդիկայի պարագայում դիտարկում է հիմնահարցին նվիրված ինչպես մեթոդական գրականությունը, այնպես էլ համապատասխան ատենախոսությունները:

Երկրորդ՝ «Խնդիրների լուծման տեսության և մեթոդիկայի ընդհանուր հարցերն ավագ դպրոցում» գլխում նախ արվում է խնդրի և խնդրի լուծման ուսուցման և նրանց հետ փոխկապակցված հասկացությունների բավականին մանրակրկիտ ուսումնասիրություն: Այնուհետև ավագ դպրոցում ֆիզիկայի խնդիրների լուծման մեթոդիկային առնչվող հարցերի շրջանակում կարևորվում է գիտական իմացության մեթոդաբանությունը սովորեցնելու խնդիրը: Ատենախոսը գտնում է, որ

մեթոդաբանության հասկացությունը և մեթոդաբանական մոտեցումները առավել ընկալելի են հենց ավագ դպրոցի սովորողների համար: Այս գլխի վերջում աստենախոսը կանգ է առնում ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ խնդիրների լուծման հոգեբանամանկավարժական որոշ առանձնահատկությունների վրա:

Երրորդ՝ «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ խնդիրների լուծման մեթոդիկան ավագ դպրոցում» գլուխը նվիրված է աշխատանքում առաջադրված խնդիրների իրականացման մեթոդիկային: Ֆիզիկայի խնդիրների լուծման գործընթացում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանն ուղղված և աստենախոսի մշակած մեթոդիկան իրականացվում է համաչափության և վերադրման սկզբունքների և չափայնությունների վերլուծության ու նմանության մեթոդների կիրառմամբ՝ կոնկրետ խնդիրների լուծման և լուծման ուսուցման օրինակներով:

Վերջին գլուխը նվիրված է մանկավարժական գիտափորձին: Կիրառվում են ինչպես մանկավարժական, այպես է վիճակագրական մեթոդներ: Ըստ ներկայացված փորձարարական տվյալների և վերլուծության արդյունքների, խնդիրների լուծման և լուծման ուսուցման ժամանակ ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ ուսուցում իրականացված փորձարարական խմբերի արդյունքները, ինչպես գիտելիքների, այնպես էլ ստեղծագործական մտածողության զարգացման մակարդակով գերազանցում են ստուգիչ խմբերի համապատասխան արդյունքները:

Հարկ էմ համարում նշել, որ աշխատանքում դիտարկված է բավականին բարդ հիմնախնդիր, որը մեզանում՝ դասավանդման բնագիտամաթեմատիկական բնագավառի մասնագետների կողմից քիչ է ուսումնասիրվել: Մինևույն ժամանակ ներկայումս, ինչպես արտերկրում, այնպես էլ մեր կրթական՝ նոր չափորոշիչներում առանձնապես կարևորվում է սովորողների ստեղծագործական մտածողության խնդիրը: Այնուամենայնիվ, աստենախոսը կարողացել է հաղթահարել առկա դժվարությունները և հաջողությամբ լուծել առաջադրված խնդիրները:

Աշխատանքը գերծ չէ թերություններից:

1. Կարծում եմ, որ աշխատանքի առաջին զույգը ավելի ընկալելի կլիներ, եթե նրա շարադրանքում նախ դիտարկվեր երկրորդ ենթազույգը, որը նվիրված է ստեղծագործական մտածողության զարգացման ընդհանուր հիմնահարցի քննարկմանը, որից հետո միայն անդրադառնալ առաջին՝ ֆիզիկայի ուսուցման գործընթացում ստեղծագործական մտածողության զարգացման խնդրին:

2. Հավանաբար աշխատանքը կշահեր, եթե ֆիզիկայի հիմնարար սկզբունքների և մեթոդների կիրառմամբ խմբիկների լուծման մեթոդիկայում ակնառու դարձվեր ստեղծագործական մտածողության զարգացման պահը:

3. Ատենախոսը քիչ ուշադրություն է դարձրել անգլերեն լեզվով գրականությանը, մինչդեռ վերջին ժամանակներում հենց արևմտյան հետազոտողներն են առավել կարևորում ստեղծագործական մտածողության զարգացման խնդիրը:

4. Աշխատանքում նկատելի են լեզվական թերություններ և վրիպակներ. որոշ դեպքերում առկա են.

ա. եզակիի և հոգնակիի թյուրըմբռնում.

Էջ 21, երկրորդ և վերջին պարբերություններ,

Էջ 60, երկրորդ պարբերություն:

բ. երկարաշունչ նախադասություններ

Էջ 25, երկրորդ պարբերություն – նախադասությունը 15 տող է:

Էջ 30, վերջին պարբերություն – նախադասությունը 15 տող է: Եվ այլն. . .

գ. ռուսերենից ոչ սահուն թարգմանություն:

Նկատված թերությունները, սակայն, չեն ազդում աշխատանքի ընդհանուր որակի վրա: Նույն Գագիկի Մովսիսյանի «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության

գարգացման միջոց» ատենախոսական աշխատանքը արդիական, ամբողջական, ավարտուն, տեսական և պրակտիկ նշանակությամբ գիտական հետազոտություն է և համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ ատենախոս Նունե Գազիկի Մովսիսյանը արժանի է հայցելու նշված մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:


Մանկավարժական գիտությունների դոկտոր, ֆիզմաթ
գիտությունների թեկնածու, պրոֆեսոր



Համլետ Սուրենի Միքայելյան

23.02.2023թ.

Հ. Ս. Միքայելյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտական քարտուղար



Մ. Մ. Իսախիրյան

24.02.2023թ.